

Արձանագրություն 9

2014 թ. նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014 թվականի ուստարվա գործունեության հաշվետվությունը և 2015 ուստարվա զարգացման հայեցակարգը:

/ զեկ.՝ Ն. Կուտուզյան /

2.ԳՊՀ 2013-2014 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունը և 2014-2015 ուստարվա զարգացման ռազմավարական ուղղությունները:

/ զեկ.՝ Ն. Կուտուզյան /

3.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի գործունեության հաշվետվությունը ներկայացրեց ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանը: Զեկուցողն անդրադարձավ ուսանողների առաջադիմությանը՝ ընդհանուր և ըստ բաժինների, կատարվեց համեմատություն առկա և հեռակա ուսուցման համակարգերի միջև, ներկայացվեցին և քննարկվեցին ուսանողական հարցումների արդյունքները: Նշվեց, որ սահմանված կարգով կազմակերպվել և պատշաճ կերպով անցկացվել են ամփոփիչ ատեստավորման քննությունները: Ողջ ուսումնական տարվա ընթացքում կատարվել են տարաբնույթ աշխատանքներ՝ նպատակակետ ունենալով կրթական ծրագրերի իրականացման որակը:

Այնուհետև ներկայացնելով ԳՊՀ 2013-2014 ուստարվա ուսումնագիտական գործունեությունը՝ զեկուցողն անդրադարձավ 2013թ. ընդունելության քննություն-ներին առկա, հեռակա և մագիստրոսական ուսուցման համակարգերում՝ բերելով համապատասխան թվային տվյալներ: Շարունակվել է բարձր առաջադիմություն ցուցաբերած 2013թ. շրջանավարտների ընդունելության գործընթացը ԳՊՀ-ի հետ պայմանագրեր ունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից: Ներկայացվեցին ուսանողների՝ 1-ին և 2-րդ կիսամյակների առա-

ջադիմության ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ: Նշվեց, որ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումն անցկացվեց գործատուների, համապատասխան ոլորտի մասնագետների, գիտական հիմնարկների մասնագետների մասնակցությամբ: Ատեստավորման ողջ ընթացքը ձայնագրվեց, որն օգտագործվեց գնահատականների բողոքարկման ժամանակ: ՀՀ կառավարության որոշումներին, ՀՀ կրթության և գիտության նախարարության նորմատիվ փաստաթղթերին, կրթության որակի ապահովման ազգային և միջազգային պահանջներին համապատասխան՝ ԳՊՀ կանոնակարգերում և ընթացակարգերում կատարվել են փոփոխություններ: Հաշվետու ժամանա-կաշրջանում գործարկվել են նոր կայքէջ և էլեկտրոնային գրադարան: Համա-լսարանը շարունակել է համագործակցությունը գիտական, ուսումնական, կրթական, մշակութային տարբեր կազմակերպությունների հետ: Համալ-սարանում անցկացվել է ամենամյա՝ 16-րդ գիտաժողովը, որը նվիրված էր ԳՊՀ հիմնադրման 20-ամյակին: Կարևոր իրադարձություն էր ուսանողական հանրա-պետական գիտաժողովը, որն անցկացվեց Գավառի պետական համալ-սարանում: Հրատարակվել են նաև ԳՊՀ դասախոսների հեղինակած ուսում-նական, մեթոդական աշխատանքները:

Ձեկուցումները ներկայացվեցին զարգացման հայեցակարգերի համա-տեքստում: Նշվեց, որ հայեցակարգով նախատեսված որոշ հարցեր իրենց լիար-ժեք լուծումը չեն ստացել: Դրանք ներառված են նոր հայեցակարգում: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ՀՈՒՖ 2015թ. ուստարվա հայեցակարգը և ԳՊՀ 2014-2015 ուստարվա ուսումնագիտական գործունեության ռազմավարական ուղղու-թյունները:

Հիմք ընդունելով զեկուցումները՝ ԳՊՀ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ՀՈՒՖ 2014 ուստարվա ուսումնագիտական գործունեության վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնա-հատել բավարար:

2. Հաստատել ԳՊՀ 2013-2014 ուստարվա ուսումնագիտական գործունեության հիմնական ուղղությունները:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան

